



## ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ



Հայկական բարձրավանդակում աստ-  
ղագիտությունն սկսել է զարգանալ դեռևս խոր  
հնադարում: Նույնիսկ փաստեր կան, որ երկինքը  
համաստեղությունների է բաժանվել հենց պար-  
մական Հայաստանի տարածքում: Ըստ որում այդ  
փաստերի մասին առաջինը խոսել են ոչ թե հայ,  
այլ եվրոպացի և ամերիկացի գիտնականները  
դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի  
սկզբին: Նոր հետազոտությունները նաև ցույց  
են տալիս, որ շումերների մաթեմատիկական և  
աստղագիտական տեսությունների մեծ մասը կա-  
րելի է հասկանալ միայն հայերեն իմանալու  
դեպքում: Դա նշանակում է, որ իսկապես հնա-

դարում Հայաստանում և այն էլ հայերեն լեզվով բարձրակարգ աստղագիտական  
գիտելիքներ են եղել:

Սակայն որևէ հայ աստղագետի անուն հնադարից մինչև մեր օրերը չի հասել:  
Պարմագրության մեջ պահպանված առաջին հայ աստղագետը Անանիա Շիրակացին  
էր, որի բազմաթիվ ձեռագրերը հասել են մեր օրերը և հետազոտվել ժամանակակից  
գիտության մեթոդներով: Անանիա Շիրակացին ծնվել է մոտավորապես տասնչորս  
դար առաջ՝ 610 թվականին Շիրակի Անանիա գյուղում: Սկզբնական կրթություն է  
ստացել Շիրակում գրնվող Դպրեվանքում: Քանի որ այդ ժամանակ ձեռագրեր գրելով  
չկային, իսկ նրանք, որ վերաբերում էին թվարանության, բնության երևույթներին  
ու փիլեգրքին, իսպառ բացակայում էին, նա որոշում է գիտելիքներ ձեռք բերելու  
նպատակով այլ երկրներ գնալ:

Մեկ-երկու ուսուցչի հետ հանդիպելով և տեսնելով, որ նրանց գիտելիքները  
բավարար չեն իր բոլոր հարցերին պարասխաանելու համար, նա գնում է Տրա-  
պիզոն, որտեղ ապրում էր հույն գիտնական Տյուքիկոս Բյուզանդացին: Նա ութ  
տարի սովորեց Տյուքիկոսի մոտ, ապա վերադարձել հայրենիք: Այստեղ նա իր  
գիտելիքները տարածելու նպատակով բացում է դպրոց և գրում թվարանությանը,  
աստղագիտությանը, աշխարհագրությանը նվիրված տարբեր գիտական աշխարհ-  
ություններ և դասագրքեր:

Շիրակացին գիտեր, որ Լուսինը սեփական լույս չունի և այն լուսավորվում է  
Արեգակի ճառագայթներով: Իմանալով այդ բանը, նա կարողանում էր բացատրել  
Լուսնի և Արեգակի խավարումները: Նա նաև պնդում էր, որ Երկրի հսկառակ կողմում  
ևս մարդիկ են ապրում, և Արեգակը լուսավորում է նրանց, երբ այս կողմում գիշեր  
է: Նրա գիտելիքների խորության մասին է խոսում այն, որ դեռևս 7-րդ դարում նա

պնդում էր, որ Ծիր կաթինն իրականում ոչ թե մշուշ է, այլ շարք հեռվում գրնավող բազմաթիվ աստղերի միաձուլված լույս: Այդ բանը ապացուցվեց նրանից գրեթե հազար տարի անց, երբ Գալիլեո Գալիլեյն իր սրեղծած աստղադիտակն առաջին անգամ ուղղեց Ծիր կաթնի վրա:

Քսաներորդ դարում Լուսնի հակառակ կողմի խառնարաններից մեկը Միջազգայն Աստղագիտական Միության կողմից կոչվեց Շիրակացու անունով: